ISBN 978-9939-1-0427-0

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ»
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

УНИВЕРСИТЕТ
“ГРИГОР НАРЕКАЦИ”

ԴՊՐԱՏՈՒՆ

Գիտական հոդվածների ժողովածու

Сборник научных статей

1(4)-2016

«Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարան
Госаккредитованный университет “Григор Нарекаци”
“Grigor Narekatsy” State Accredited University

ԴՊՐԱՏՈՒՆ

Գիտական հոդվածների ժողովածու

ДПРАТУН
Сборник научных статей

DPRATUN
Collection of Scientific Articles

1(4)
2016

Ստեփանակերտ
Степанакерт
Stepanakert

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Издательство “Дизак плюс”
“Dizak plus” Publishing House

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Դ 825

Հրատարակվում է 2011թ.
Издается с 2011г.

Գլխավոր խմբագիր

Հակոբյան Վարդան - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ստեփ. «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռեկտոր

Պատասխանատու խմբագիր

Բեգլարյան Ժաննա - ՀԼԳ ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու

Դ 825 Դպրատուն: Գիտ. հոդվածների ժող. /«Գրիգոր Նարեկացի» պետ. համալսարանի մագրված համալս. - Ստեփանակերտ: Դիզակ պլյուս, 2016.
Հ. 1(4):2016 / Խմբ. խորհուրդ՝ Ա. Ավագյան և ուրիշ: Գլխ. խմբ.՝ Վ. Հակոբյան.-96 էջ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ - բան. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ* - բան. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *ԲԱԼԱՅԱՆ ՌՈՆԱ* - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, *ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ* - բան.գիտությունների թեկնածու, *ԴՈՒԼՈՒԽԱՆՅԱՆ ԱԵԼԻՏԱ* - ՀԳԱԱ թղթակից-անդամ, պրոֆեսոր, *ԹՈՎՄԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ* - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, *ԹՈՎՄԱՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ* - բան. գիտությունների թեկնածու, դոցենտ, *ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ* - բան. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՎԱԿ* - իրավաբանական գիտությունների թեկնածու, *ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ* - մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *ՄԱՆԱՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ* - փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀԳԱԱ թղթակից-անդամ, *ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ* - բան. գիտությունների թեկնածու, *ՄԿՐՏՉՅԱՆ ԷԴՎԱՐԴ* - բան. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀՈՎԻԿ* - բան. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՐՔՄԵՆԻԿ* - բան. գիտությունների թեկնածու, *ՍԱՌԱՋՅԱՆ ՋԱՐԻՆԵ*-բան.գիտությունների թեկնածու, *ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ*-բան. գիտությունների թեկնածու,*ՍԱՐԻՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ* - բան. գիտությունների դոկտոր, ՀԳԱԱ ակադեմիկոս, *ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ* - բան. գիտությունների թեկնածու, դոցենտ,*ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ԺԵՆՅԱ* - բան. գիտությունների դոկտոր

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-9939-1-0427-0

© «Գրիգոր Նարեկացի» համալսարան, 2016
© Վ. Հակոբյան, 2016

ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՊԵՏՐՈՍ ՇԱՆՇՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Բանալի բառեր *- Թիֆլիս, Շուշի, Ներսիսյան դպրոց, թեմական դպրոց, օրիորդաց դպրոց, ծխական դպրոց, Արարատ, Ջրաբերդ, Երվանդ Շահազիզ, Խորեն Ստեփանե, Սեդրակ Մանդինյան*

Հայ մշակույթի կարկառուն ներկայացուցիչների շարքում իր գիտական մեծ ներդրումն ունի անվանի մանկավարժ, հասարակական խոշոր գործիչ Պետրոս Սամվելի Շանշյանը: Հարկ է նշել, որ պատմական արժեքավոր աղբյուրները շատ քիչ են անդրադարձել հայտնի մանկավարժի կյանքի որոշ դրվագներին, մշակութային գործունեությանը, հատկապես, նրա ***մանկավարժական հայացքներին:*** Սույն ուսումնասիրության նպատակն է հրապարակի վրա եղած ուշագրավ նյութերի ուսումնասիրման հիման վրա ներկայացնել Պ.Շանշյանի մանկավարժական հայացքների հետ առնչվող որոշ դրվագներ:

Պ. Շանշյանի ***մանկավարժական*** ըմբռնումները ձևավորվել են նախորդ դարերի լուսավորիչների հայացքների ներքո: Նրա մանկավարժական գաղափարները հիմնականում ուղղված են 19-րդ դարի առաջին կեսին ազգային դպրոցի կրթական համակարգում իրականացվող փոփոխությունների իրականացմանը:

Պետրոս Շանշյանի դիտակտիկական հայացքները: Անվանի մանկավարժի դիտակտիկական հայացքներից առաջնայինը ուղղված է կրթական համակարգի արմատական վերափոխմանը:

Խնդիրը կայանում է նրանում,որ հայ ժողովրդի երկու հատվածներում էլ մինչև XIXդ. գոյություն ունեցած սակավաթիվ եկեղեցական ու վանական դպրոցներում կիրառվում էր ուսուցման միջնադարյան-սխոլաստիկ, խալֆայական ձևը. աշակերտները սովորում էին մեխանիկորեն, անգիր անելով, չկար որոշակի կարգ ու կանոն, մարմնական պատիժը համարվում էր ուսուցման գործընթացի անբաժան մասը: Խիստ սահմանափակ էր յուրացվող գիտելիքների շրջանակը: Շատ ավելի տարածված էր այսպես կոչված խալֆաների, երևելիների, տիրացուների, քահանաների նախաձեռնությամբ կազմակերպվող տնային, մասնավոր, անհատական ուսուցումը, որը ոչ մի հսկողության չէր ենթարկվում: Հաղորդվող գիտելիքների չափն ու բովանդակությունը կախված էր «ուսյալ» վարժապետի խղճից ու կարողությունից Այդպիսի ուսուցման նկարագիրը տվել են նաև հայ գրողները՝ իրենց գրական երկերում կամ համապատասխան հոդվածներում.օր՝ Ռ. Պատկանյանի «Չախու», Եր. Շահազիզի «Նոր Նախիջևանի ուսումնական գործի անցյալը», Աղ. Արարատյանի «Գյուղական խալֆա», Պ. Պռոշյանի «Գյուղական վարժապետը» և այլ գործերում: Արդեն XIXդ. առաջին կեսից հայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատ-

մության մեջ կատարվել են էական փոփոխություններ: Հայ առաջադեմ մանկավարժների ջանքերով ազգային կրթության մակարդակը որոշակիորեն բարելավել է: Նրանց համառ գաղափարական պայքարի շնորհիվ հայկական դպրոցներում մտցվել են ուսուցման նոր մեթոդներ:

Պ.Շանշյանի մանկավարժական հայացքներն ուղորդվել են Թիֆլիսի ու Արցախի ուսումնական հաստատություններում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերով ու մեթոդներով: Դրանց մասին վկայում է պատմաբան Լեոն. «Շանշյանի տեսչության տարիներին Թիֆլիսի Ներսիսյան և Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցներում կատարվեցին էական փոփոխություններ: Փոխվեցին ուսուման բովանդակությունն, ուսուցման սկզբունքներն ու մեթոդները և այլ»:

Շանշյանը ազգային կրթական համակարգը որոշակիորեն բարելավելու համար նախապատվությունը տվել է դաս-դասարանային համակարգի լայն տարածմանը: Հարկ է նշել, որ դաս-դասարանային համակարգը գիտականորեն հիմնավորել է չեխ ականավոր մանկավարժ Յան Ամոս Կոմեսկին իր «Մեծ դիտակտիկա» նշանավոր աշխատության մեջ: Այս նոր կրթական համակարգը Անդրկովկասում, մասնավորապես Արևելյան Հայաստանի դպրոցներում, կիրառվել է XIX դ. առաջին քառորդից: Մինչ այդ տարբեր տարիքի երեխաները դպրոց են ընդունվել տարվա ցանկացած ժամանակ, չի եղել որոշակիորեն սահմանված ուսումնական տարի, որն ունենար իր սկիզբն ու ավարտը. ուսուցումն անհատական և անընդհատ էր՝ ամբողջ տարին: Շնորհիվ այդ համակարգի հստակեցվել է ուսումնական տարվա սկիզբն ու ավարտը: Օր՝ Արցախի դպրոցներում, հատկապես Թեմականում ուսումնական տարին սկսվել է ոչ թե սեպտեմբերից և վերջացել մայիսին, այլ հունվարից- հունվար:

Շանշյանի մանկավարժական գաղափարներից կարևորագույնը ուղղված է ազգային լեզվի խորը իմացությանն: Անվանի մանկվարժն ազգային լեզվի խոր ուսուցման գործընթացում նախապատվությունը տվել է Խ. Աբովյանի մշակած այսպես կոչված «հնչական» մեթոդին, որն աշակերտին հնարավորություն է ընձեռնել խորամուխ լինել ազգային լեզվով դասավանդվող առարկաների բովանդակության և առարկայական ծրագրերի մանրակրկիտ յուրացման գործընթացում:

Մայրենի լեզվի և այդ «հնչական» մեթոդի մասին Գրիգոր Երզնկյանը նշում է. «Մայրենի լեզվի ուսուցման նպատակն էր աշակերտներին սովորեցնել կարդալ, բանավոր և գրավոր արտահայտելու իրենց մտքերը: «Հնչական» մեթոդը հնարավորություն է ընձեռնել աշակերտին գիտակցաբար վերաբերվել դեպի իր կարդացածը և գրագետ արտահայտել իր մտքերը թե՛ բանավոր և թե՛ գրավոր կերպով: Պետք է նշել, որ մայրենի լեզվի ուսուցման ժամանակ հեղինակը հաշվի է առել գրագիտությունը, ընթերցանությունը, գրավոր աշխատությունը և քերականությունը»:

Պ.Շանշյանի նախաձեռնության շնորհիվ մայրենի լեզվի ուսուցումը առաջին տարում ընթանում էր բանավոր վարժություններով, իսկ երկրորդ տարվանից աշակերտները կատարում էին թարգմանություններ՝ գրաբարից աշխարհաբար: Հայկական դպրոցներում լեզուների ուսուցման ընթացքում ամենագործածականը վարժության, կրկնության և համեմատության մանկավարժա-հոգեբանական մեթոդներն էին: Իսկ ընթեր-

և ուրիշներ:

Պ. Շանշյանի տեսչության տարիներին Թիֆլիսի ու Արցախի հայկական դպրոցներում ուշադրություն է դարձվում աշակերտների բարոյական, հայրենասիրական, ֆիզիկական, աշխատանքային և գեղագիտական դաստիարակությանը: Հայ առաջավոր մանկավարժներին մտահոգում էր այն, թե բարոյական ինչպիսի՞ գծերով պետք է դաստիարակել աճող սերնդին: Ըստ նրանց՝ երեխաների բարոյական դաստիարակությունը նախ տարվում է ընտանիքում, հետո՝ դպրոցում, որն իրագործվում է դասարանական աշխատանքների ընթացքում, ինչպես սովորողների կոլեկտիվում, այնպես էլ նրանց հետ տարվող անհատական աշխատանքներում: Շանշյանը համամիտ է մյուս մանկավարժների այն կարծիքի հետ, որ դպրոցն ընտանիքի շարունակությունն է:

Ուսուցիչները հաճախում են աշակերտների տները, ծանոթանում ընտանեկան պայմաններին, զրուցում երեխաների առաջադիմության և անառաջադիմության մասին: Բարոյական դաստիարակության նպատակը համարում են աճող սերնդի մեջ լավ քաղաքացու հատկանիշներ պատվաստել՝ ինչպիսիք են հայրենասիրությունը, մարդասիրությունը, ազնվությունը, համեստությունը, չափավորությունը, համբերությունը, աշխատասիրությունը և այլն:

Պ. Շանշյանը (ինչպես նաև Խ.Ստեփանեն, Ս. Մանդինյանը, Ղ.Աղայանը, Լ. Սարգսյանը և ուրիշներ), աշակերտների վարքն ուսումնասիրելու, նրանց մեջ բարոյական գծեր զարգացնելու համար առաջին նախապայման է համարում՝ սիրել երեխաներին, հարգել, չվիրավորել նրանց ինքնասիրությունը, վերաբերմունքի մեջ լինել համբերող, ներողամիտ:

Հայրենասիրական ոգով դաստիարակելու համար, ուսուցիչները դպրոցների տեսուչների հանձնարարությամբ անց են կացնում ազգային-հայրենասիրական դասընթացներ: Շանշյանը հայրենիքի վերաբերյալ իր հայրենասիրական գաղափարները շարադրել է «Ուսումն Պարտուց» աշխատության «Ընդհանուր պարտավորություններ» բաժնում: «Արարատ» ամսագրում նշվում է. «Շուշիի թեմական դպրոցում առանձնապես մեծ ուշադրություն է դարձվում երեխաների մեջ սեր պատվաստելուն՝ դեպի հայրենի պատմությունը, գրականությունը: Այստեղ կազմակերպում էին գրական երեկոներ, որտեղ ուսուցիչների ներկայությամբ քննարկում էին բարոյախրատական թեմաներով գրված աշակերտների գրավոր աշխատանքներ»:

Պ. Շանշյանի դաստիարակչական հայացքներից մեկն էլ ուղղված է մատաղ սերնդին քրիստոնեական գաղափարներով դաստիարակելուն:

Ցանկանում ենք ընդգծել, որ Պ. Շանյանը եղել է շատ կրոնասեր անձնավորություն: Նրա հոգևոր հայացքներում կրոնը դիտարկվում էր որպես կարևոր գիտություններից մեկը: Կրոնի ուսումնասիրման և յուրացման համար կարևորում է Աստվածաշնչի դերը: Նա գտնում է, որ քրիստոնեական կրոնի էությունը հասկանալու համար պետք է ճանաչել, սիրել ու պաշտել Աստծու, և որ դրանով է պայմանավորվում անձի հանգստությունն ու երջանիկ կյանք ունենալը:

Մեր ուսումնասիրությունից ելնելով, հանգել ենք այն եզրակացության, որ Պ. Շանշյանի մանկավարժական հայացքների իրագործման շնորհիվ,

քննարկվող ժամանակաշրջանում ազգային դպրոցներում կրթական համակարգը որոշակիորեն բարելավելով, հող, նախապատրաստվել հետագա տարիների ազգային կրթության զարգացման համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Տե՛ս Մ. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Եր., 1964:

2.Տե՛ս Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի(1838-1913թթ.), Թիֆլիս,1914, էջ 283-284, 286-295:

3.Տե՛սԳ. Հարությունյան, Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում, Ստեփանակերտ, 2000, էջ 135:

4.Տե՛ս Գ. Երզնկյան, Դասավանդման խորհուրդներ, Վաղարշապատ, 1892, էջ 13:

5. Տե՛ս Արարատ, 1893, N 9-10, էջ 874:

6.Տե՛ս Մատենադարան, Կաթող. դիվան, թ. 116, վավ. 345, 363:

7. Մանրամասն տե՛ս Պ. Պռոշյան, Ղարաբաղու Տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացուիլը, Շուշի, 1864:

8.Տե՛ս Աշակերտ,1979, N 1-5:

9.Կուսապատ դպրոցի արխիվը: Տե՛ս նաև Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 132:

10.Դպրոց, 1875-1876, մաս Ա, N1, էջ 17- 35, մաս Բ, N4, էջ 147-152: Արարատ,1871, N3, էջ 349, 1893, N9-10, էջ 867-878:

11.Մելքիսեդեկ եպս. Մուրատեան, նշվ. աշխ., էջ 44:

12.Նույն տեղում, էջ 39:

13.Պ. Շանշեանց, Ուսումն պարտուց, հ. բ. Կ. Պոլիս,1870, էջ 65-71:

14.Արարատ,1871, N3, էջ 295-297:

15.Պ. Շանշեանց, Համառոտութիւն քրիստոնէական ուսման Հայաստանեաց առաքելական սուրբ եկեղեցւո, Երուսաղեմ,1879, էջ 5:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՊԵՏՐՈՍ ՇԱՆՇՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հոդվածում քննության է առնվում հայ կրթական համակարգը 19-րդ դ. 50-60-ական թթ., նշվում է, որ XIX դարի 50-60 թթ.՝ Պետրոս Շանշյանի ղեկավարության տարիներին, կրթական համակարգը որոշակիորեն բարելավեց Թիֆլիսի Ներսիսյան, Արցախի թեմական և Մարիամյան օրիորդաց դպրոցներում: Նրա մանկավարժական հայացքների շնորհիվ կատարելագործվեցին ուսման բովանդակությունն, ուսումնական պլաններն ու ծրագրերը, ինչպես նաև նոր ուսումնադաստիարակչական մեթոդներ կիրառվեցին այդ դպրոցներում:

РЕЗЮМЕ

ПЕДАГОГИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ ПИТЕР ШАНШЯНА

МАРИНЕ АРУТЮНЯН

Ключевые слова -Тбилиси, Шуша, школа Нерсисян, епархиальная школа, школа для девочек, приходская школа, Арарат, Джраберд, Ерванд Шахазиз, Хорен Стефане, Седрак Мандинян.

В статье рассматривается армянская образовательная система 50-60 гг. XIX века. Отмечается, что в 50-60 годах XIX века образовательная система была улучшена в некоторой степени в Нерсисяновской (в Тбилиси), Епархиальной, Мариинской (в Арцахе) школах в управленческих годах П. Шаншяна. Благодаря его педагогическим взглядам содержание обучения, учебные планы и программы были усовершенствованы, были введены новые образовательные и дисциплинарные методы.

SUMMARY

PETER SHANSHYAN'S PEDAGOGICAL VIEWS

MARINE HARUTYUNJAN

Keywords -Tbilisi, Shushi, Nersisyan school, Diocesan school, Girls' school, parish school, Ararat, Jraberd, Yervand Shahaziz, Khoren Stepae, Sedrak Mandinyan.

The article deals with the Armenian educational system of the 50-60s of XIX century. It is mentoned that in the 50-60s of XIX century educational system was improved a certain extent in Nersisyan school of Tbilisi and schools of diocese, Mariinsky of Artsakh for P. Shanshyan management years. Due to his pedagogical views, content of teaching, educational plans and programs were improved, as well as new educational and disciplinary methods were used in the schools.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ԶՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ -Գրիգոր Գուրզադյանի խոհագրության առանձնագծերը 3
Վարդան Հակոբյան. Բառը որպես աղոթքի խորան.....11

2.ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ - Խաչի, սրի և արարումի անտրոհելիության գաղափարը Հ. Խաչատրյանի պատմավեպում 25

3.ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ - ժամանակի ողբերգական պատկերը Սուրեն Սարուսյանի «Աբու Բաքր Ալ-Բաղդադին՝ շամի խալիֆը» վեպում 34

4.ԶԱՐԻՆԵ ՍԱՌԱԶՅԱՆ - Համո Սահյանի թարգմանական արվեստը.....40

5.ԱԼԻՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ - Արցախյան իրականության արտացոլումը Մ. Հովհաննիսյանի «Հեռացող երկրի կարոտը» գրքում.....47

6.ՍԻՐՎԱՐԴ ՍՏԵՓԱՆՅԱՆ - Արդիականացման խնդիրը Յ.Վ.Գյոթեի «Ֆաուստ» ողբերգության մեջ..... 55

7.ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ - Հովհ. Թումանյանի «Գիքորը» պատմվածքի առանցքային մի քանի հարցեր..... 60

8.ՆԱՆԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ - Հակոբ Կարապենցի «Միջնարար» ժողովածուն.....68

9.ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ - Հոգնակերտ ձևույթների իմաստային դրսևորումները ժամանակակից հայերենի անհոգնական և անեզական գոյականներում.....76

10.ՌԵՆԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ - Բարբառային անվանական հարադրությունները Արցախի գրողների ստեղծագործություններում.....81

11. ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Պետրոս Շանշյանի մանկավարժական հայացքները.....88

«Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարան
Госаккредитованный университет “Григор Нарекаци”
“Grigor Narekatsy” State Accredited University

ԴՊՐԱՏՈՒՆ

Գիտական հոդվածների ժողովածու

ДПРАТУН
Сборник научных статей

DPRATUN
Collection of Scientific Articles

1(4)
2016

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Պատասխանատու խմբագիր՝ ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Համակարգչային էջադրումը՝ Գ.Մնացականյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x108 $^{1}/_{16}$:
Ծավալը՝ 6 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 200:

Ստեփանակերտ
Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25
2016